Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

36(393)
30.12.2014
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Lusarar ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿՈՐՈՎ՝ ՆՈՐ

Կրկին տարեմուտ է, և նորից ամենքս նախատոնական վազվզուքի մեջ ենք: Մեզ համար նշանաբան ենք հորինել. ինչպես դիմավորենք Ամանորը, այնպես էլ կանցկացնենք ամբողջ տարին: Այսինքն՝ եթե դեկտեմբերի 31-ի գիշերը տոնական սեղանը ծանրաբեռնված լինի թանկարժեք ուտելիքներով, գալիք տարին նույնչափ առա՞տ է լինելու…

Առօրյա խոսակցություններում հաճախ ենք քննադատում մանրակենցաղությունը, բայց, միևնույն է, շարունակում ենք դրամապանակը աննպատակ դատարկելու տխուր սովորույթը: Հատկանշական է, որ այս «մրցակցությունից» դուրս չգալու համար ոմանք նույնիսկ պարտք են վերցնում ուրիշներից, որպեսզի հետո, իրենք իրենց զրկելով, աստիճանաբար մարեն այն: Խանութներում առկա վայրիվերո գները ստիպում են նորովի մոտեցում ցուցաբերել մեր իսկ սովորույթներին, հետահայաց նայել ու գնահատել անցնող տարին. արդյո՞ք արդարացել են այն բոլոր սպասումները, որոնք փայփայել ենք նախորդ տարեմուտին: Ի՞նչ խնդիրներ են մնացել չլուծված, և արժե՞, արդյոք, դրանք անկատար վիճակում փոխանցել նոր տարուն: Ավելին ասենք՝ իմա՞ստ ունի հին հոգսերին նորերն ավելացնել:

Այս և նմանատիպ հարցերը, որոնք սոցիալականից զատ ունեն նաև հոգեբանական հենք, պատմության գիրկն անցնող 2014-ի ժառանգությունն են, որի կրողը ինքներս ենք:

Անկասկած, անցնող տարում, հատկապես գիտակրթական ոլորտում, առաջընթաց եղել է: Ուսումնատեխնիկական բազայի վերազինման, շենքային պայմանների բարելավման և կրթական մակարդակի բարձրացման ուղղությամբ նշանակալից քայլեր արվել են, և սա լավ հարթակ է բնագավառում հետագա հաջողություններ ամրագրելու համար:

Մարդու կյանքի ամենալավ տոներից մեկը, անշուշտ, Ամանորն է, որովհետև տարեսկիզբը նաև նոր հույսերի յուրօրինակ մեկնարկ է: Իսկ ինչպիսի՞ն է ուրվագծվում 2015-ը: Այս հարցին միանշանակ պատասխանել դժվար է, որովհետև մեզանից յուրաքանչյուրը սպասումների ու գնահատումների ի՛ր չափանիշն ունի: Բայց ամեն մեկիս չափանիշը չպիտի դառնա անձնական շահադիտության գործոն. ընդգրկուն հայացքով նայենք առաջիկա մարտահրավերներին: Չմոռանանք, որ մի քանի ամիս անց կլրանա Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը, և այս ուղղությամբ աշխարհասփյուռ անց կլրանա Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը, և այս ուղղությամբ աշխարհասփյուռ հայերս, համախմբված նույն հայրենիքի շուրջը, լուրջ անելիքներ ունենք: Մենք պետք է աշխարհին ի ցույց դնենք անցյալ դարասկզբին հայ ժողովրդի հանդեպ Օսմանյան Թուրքիայի իրականացրած ոճիրի անպատժելիության ծանր հետևանքները: Պիտի համախմբենք մեր ջանքերը Արցախի միջազգային ճանաչմանն ուղղված նախաձեռնություններում՝ կարևորելով նաև այն հանգամանքը, որ ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցությունը տարածաշրջանում նոր կացություն է ձևավորում: Եվ, իհարկե, պիտի շարունակենք շենացնել մեր սիրելի Արցախը, ոգեկոչված կրթենք ու դաստիարակենք մեզ վստահված մատաղ սերնդին՝ ապահովագրելով մեր վաղվա խաղաղ և բարգավաճ օրը:

Ասել է թե՝ 2015-ը նույնպես հագեցած տարի է լինելու, ուստի, մեզ լավատեսություն ու վստահություն է պետք նոր տարում, ուժ ու կորով, որն էլ սիրով մաղթում ենք «Լուսարար»-ի բազմահազար ընթերցողներին: Թող տոնօրյա լույսերը պայծառ ճառագեն ձեր օջախներում, լիանաք ու զորանաք ձեր ազնիվ իղձերի անվերապահ իրականացմամբ:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԼԱՎԱ ԱՍՐՅԱՆԻ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ



Հարգելի՛ մանկավարժներ, դասախոսներ, սիրելի՛ ուսանողներ, աշակերտներ

Տարեմուտը նոր հույսերի ու ակնկալիքների մեկնարկ է, որ ուղեկցում է մեզ ամբողջ տարվա ընթացքում: Լավատեսությամբ համակված դիմավորենք Նոր տարին՝ հավատալով, որ այն բոլոր երազանքները, որոնք չեն իրականացել 2014-ին, գալիք տարում անպայման իրականություն կդառնան:

Թող, ուրեմն, 2015 թվականը խնդությամբ այցի գա ձեր օջախները, բարեմաղթանքի զնգոցով բացվեն ամանորյա սեղանները, լինի սպասված հաջողությունների, վաստակած ձեռքբերումների, խաղաղության ու առատության տարի:

Մաղթում եմ ձեզ և ձեր ընտանիքներին անսպառ բերկրանք ու երջանկություն:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ԱԿՆՀԱՅՏ ԵՆ, ԱՆԵԼԻՔՆԵՐԸ՝ ՇԱՏ

Նոր տարվա նախաշեմին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը ավանդական հանդիպում ունեցավ լրագրողների հետ՝ ամփոփելու տարվա ընթացքում ոլորտում կատարված աշխատանքները: Նախարարը սկզբում իր գոհունակությունը հայտնեց զանգվածային լրատվամիջոցներին՝ կրթության ոլորտը ուշադրության կենտրոնում պահելու և ամբողջ տարվա ընթացքում ոլորտի միջոցառումները լուսաբանելու, բարեփոխումների ընթացքի մասին հանրությանը իրազեկելու համար: Նաև շնորհավորեց Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ:

Ս. Ասրյանի գնահատմամբ՝ տարին կրթության ոլորտի համար եղել է բովանդակալից: Իրականացվել է այն պետական քաղաքականությունը, որ հիմնված է ԼՂՀ Նախագահի նախընտրական, կառավարության գործունեության ծրագրերի վրա և դրանցից բխող՝ նախարարության աշխատանքային պլանով:

Ամենակարևոր նվաճումը նախարարը համարեց այն, որ բոլոր հաստատությունները բնականոն հունով կարողացել են կազմակերպել իրենց աշխատանքները: Եվ այն խնդիրները, որ նախատեսել են աշխատանքային պլանով, որի հիմնական առանցքը ոլորտի բարեփոխումների հաջորդական իրականացումն է, կարողացել են տարվա կտրվածքով լուծել: Եվ նաև նախանշվել են 2015-ի անելիքները:

Շոշափելի հաջողություններ են արձանագրվել նախադպրոցական կրթության ոլորտում: 2014թ. կառուցվել են 3 նոր մանկապարտեզներ՝ Քաշաթաղի շրջանի Մոշաթաղի, Կովսականի և Ասկերանի շրջանի Հարավի համայնքներում (վերջինս գործելու է դպրոցին կից): Մանկապարտեզների նկատմամբ հետևյալ մոտեցումն է ցուցաբերվում. եթե փոքրաթիվ երեխաներ են ընդգրկվում մանկապարտեզում, ավելորդ ֆինանսական միջոցներ չծախսելու նպատակով այն գործելու է դպրոցին կից: Իսկ 2 և ավելի խմբեր ունեցող մանկապարտեզները գործելու են ինքնուրույն: Առաջիկայում կգործարկվի Ստեփանակերտի Վաղարշյան փողոցում նոր կառուցվող մանկապարտեզը, և տարվա ընթացքում՝ Ստեփանակերտի 2 թաղամասերում կառուցվող նոր մանկապարտեզները: Ընթացքում են Հադրութի և Տումի գյուղի մանկապարտեզների նոր շենքերի կառուցման աշխատանքները: Ավարտին է հասցվել Մարտակերտի շրջանի Հարգոմերի մանկապարտեզի նոր շենքը, որը կգործարկվի նոր տարուց: Այսպիսով, 2014թ. հանրապետությունում ունենք 45 մանկապարտեզ, որից 30-ը՝ պետական: Թված այս մանկապարտեզներով ցանցը համալրելով՝ կարելի է ասել, որ նախադպրոցական կրթության ոլորտում որդեգրած պետական քաղաքականությունն աստիճանաբար իրականացվում է: Ներկա դրությամբ մանկապարտեզներում ընդգրկված են 3495 երեխաներ, 62 նախադպրոցական խմբերում, որոնք գործում են դպրոցներին կից՝ 1455 երեխաներ, որը նախորդ տարվա համեմատությամբ 336-ով ավել է: Ս. Ասրյանը մեկ անգամ ևս ուշադրությունը սևեռեց այն փաստին, որ 2013թ. Ստեփանակերտում, նախաձեռնելով ավագ տարիքի նախադպրոցական խմբերի տեղափոխումը հանրակրթական դպրոցներ, որոնց թիվը 2014-ին ավելացել է, այսօր կարող ենք ասել, որ մայրաքաղաքում հանրակրթական դպրոցներին պատրաստվելու նախադպրոցական տարիքի երեխաների հարցը լուծված է: Մնում է, որ ընդլայնվի նախադպրոցական հաստատությունների ցանցը, որպեսզի ընդգրկվեն նաև 2-5 տարեկան երեխաները:

Այս գործընթացը շարունակական է, և բոլոր այն համայնքներում, որտեղ կլինեն հնարավորություններ նախադպրոցական խմբերի կամ առանձին մանկապարտեզների ձևով, կիրականացվեն աշխատանքներ:

Հանրակրթության ոլորտին անդրադառնալով՝ Ս. Ասրյանը տեղեկացրեց, որ շարունակվում են բարեփոխումները: Այստեղ էլ կան զգալի հաջողություններ: Նախ՝ նոր դպրոցաշենքերի կառուցման առումով. 2014թ. շահագործման հանձնվեցին նորերը. դրանք Ստեփանակերտի h.1, 6, Ասկերանի շրջանի Աստղաշենի, Մարտակերտի շրջանի Չափարի և Քաշաթաղի շրջանի Արտաշավիի միջնակարգ դպրոցներն են: Ընթացքում են և 2015-ին հավանաբար կավարտվեն Մարտունու շրջանի Նորշենի, Հադրութի շրջանի Ազոխի և Ուխտաձորի, Քաշաթաղի շրջանի Կումայրիի և Միջնավանի դպրոցների շենքերի կառուցման աշխատանքները: Անկասկած, կրթական բարեփոխումների իրականացումը կախված է նաև շենքային պայմաններից և նյութատեխնիկական հագեցվածությունից, և այդ առումով, նախարարն իր գոհունակությունը հայտնեց ԼՂՀ իշխանություններին, որ այս հարցերը նրանց ուշադրության կենտրոնում են, և նման ընթացքով շարունակելու դեպքում առաջիկա տարիներին լուծված կլինեն դպրոցաշինության խնդիրները:

Հանրակրթության ոլորտում օրակարգային է ուսման որակի բարձրացման հարցը: Այս ուղղությամբ համապատասխան աշխատանքներ են տարվում. նախ՝ կրթության պետական տեսչության կողմից պարբերաբար իրականացվում են ստուգումներ և ցուցաբերվում մեթոդական օգնություն (այս տարի հանրակրթական և նախադպրոցական ու արտադպրոցական 33 ուսումնական հաստատություններ ենթարկվել են համակողմանի ստուգման): Նպատակն է՝ նախ իմանալ՝ ինչպիսին է վիճակը տեղերում, և նաև՝ այն խնդիրներն առաջադրել, որոնք անհրաժեշտ են իրականացնել նրանց կողմից:

Լուրջ ուշադրություն է դարձվում մանկավարժական կադրերի վերապատրաստմանը: Արդեն 4-րդ տարին է՝ ատեստավորման նպատակով ուսուցիչների վերապատրաստումներ են իրականացվում: 2014թ. վերապատրաստվել են ատեստավորման նպատակով, ինչպես նաև շախմատ առարկայի 911 ուսուցիչներ: Վերապատրաստման դասընթացներ են անցկացվել նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Ս. Ասրյանն այդ առթիվ շնորհակալություն հայտնեց ՀՀ ԿԳՆ-ին՝ այդ գործում աջակցություն ցուցաբերելու համար. 2014թ. հայաստանյան գործընկերների կողմից տրամադրվել է շարժական ինտերնետային կայան, որը հանրապետության 4 շրջաններում իրականացրել է համակարգչային գրագիտության տարածում աշակերտների և ուսուցիչների շրջանում: Վերջերս նաև Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից մի շարք դպրոցների ուսուցիչների և աշակերտների համար վերապատրաստման դասընթացներ իրականացվեցին: Այդ շարքում նախարարը նշեց ՆՈՒՌ ծրագիրը, որը մտել է երկրորդ փուլ. փոխվել է ծրագրի բովանդակությունը, և այս տարի Ստեփանակերտի և Շուշիի 6-րդ դասարանցի դպրոցականներին տրամադրվեցին բարձրակարգ համակարգիչներ:

☞ 2

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ԱԿՆՀԱՅՏ ԵՆ, ԱՆԵԼԻՔՆԵՐԸ՝ ՇԱՏ

1 ☞ Նախարարը նշեց, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ, բացի վերապատրաստումներից, լուրջ ուշադրություն է դարձվում ոչ միայն ինֆորմատիկա առարկայի դասավանդմանը, այլ նաև մյուս առարկաների գծով եղած միջոցների օգտագործման հնարավորությունները ստեղծելուն: 45 դպրոցներում կան կահավորված համակարգչային կաբինետներ, որոնք լիարժեք հնարավորություն են ստեղծում ինչպես ինֆորմատիկա, այնպես էլ մյուս առարկաների դասերը այդ կաբինետներում անցկացնելու համար:

Սակայն եկել են այն ժամանակները, երբ չպետք է բավարարվել դպրոցում մեկ համակարգչային կաբինետ ունենալով. սա պիտի լինի շարունակական, որպեսզի յուրաքանչյուր դպրոց ունենա նման հնարավորություն, և յուրաքանչյուր դասարան՝ այնպիսի հագեցվածություն, որ ուսուցիչը ստիպված չլինի կաբինետից կաբինետ տեղափոխվել: Ժամանակի ընթացքում, նաև ՀՀ ԿԳՆ օժանդակությամբ, այս խնդիրը ևս կլուծվի, համոզված է նախարարը:

Տարվա կարևոր ձեռնարկումներից մեկը Ս. Ասրյանը համարեց dasaran.am ծրագրի ներդրումը, որում ընդգրկված են 90 դպրոցներ: Հատկապես էլեկտրոնային օրագրի գործածության առումով այն նոր մշակույթ է դպրոց-ընտանիք հարաբերություններում: Յուրաքանչյուր ուսուցիչ, մտցնելով աշակերտի բացայակությունները, գնահատականները, տնային հանձնարարությունները, ծնողը հնարավորություն ունի հետևելու իր երեխայի ուսումնական գործընթացին: Անելիքներ դեռ կան այստեղ. ցանցը պետք է ընդլայնվի, և բոլոր դպրոցներն օգտվեն այս ծրագրից: Իսկ որպես հեռահար խնդիր՝ առաջիկայում նախատեսվում է ստեղծել ընդհանուր համադպրոցական ցանց, որը միանալու է Հայաստանի համադպրոցական ցանցին, և դրա միջոցով աշակերտները և ուսուցիչները հաղորդակից են լինելու բոլոր այն ծրագրերին, որոնք կկիրառվեն ուսումնական գործընթացում:

Ս. Ասրյանը որոշակի հաջողություններ նշեց արտադպրոցական աշխատանքների ոլորտում: Միայն այն հանգամանքը, որ արտադպրոցական ուսումնական հաստատություններում ներկա դրությամբ ընդգրկված են ավելի քան 8400 դպրոցականներ, այսինքն՝ աշակերտների 35 տոկոսը, խոսում է այն մասին, որ տարեցտարի այս ոլորտի գործունեությունը բարելավվում է, և երեխաների պահանջարկը նման հաստատություններում ընդգրկվելու, մեծանում է, նաև՝ գյուղական բնակավայրերում:

Նախարարը արտադպրոցական աշխատանքների արդյունք համարեց առարկայական օլիմպիադաների նկատմամբ սովորողների մեծ հետաքրքրությունը: Անցած ուստարվա արդյունքները գոհացուցիչ էին: Հանրապետական փուլի արդյունքներով՝ 52 աշակերտներ և նրանց ուսուցիչները պարգևատրվել են նախարարության պատվոգրով ու դրամական խրախուսում ստացել, 60 հոգի մասնակցել են ՀՀ օլիմպիադայի եզրափակիչ փուլին, որից 29 հոգի արժանացել են մրցանակային տեղերի և գովասանագրերի: Արդեն ավանդույթ է դարձել մեր երկրի Նախագահի կողմից օլիմպիադայում հաղթողներին ընդունելության և արժեքավոր նվերներով խրախուսանքի արժանացնելը:

Մեր դպրոցականները ակտիվորեն են մասնակցում «Այբ» կրթական հիմնադրամի միջոցով անցկացվող «Կենգուրու», «Ռուսական արջուկ», այս տարվանից նաև՝ «Մեղու», ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների գծով «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կողմից անցկացվող «Դիջիթեք», «Էկոտուր» միջազգային մրցույթներին: Ս. Ասրյանը մատնանշեց նաև փոքրիկ հաջողությունները ռոբոտաշինության բնագավառում:

Տարվա կարևոր իրադարձություններից էին Կրթության գերազանցության ազգային ծրագրի՝ Արցախում ներդրման ուղղությամբ կազմակերպված քննարկումները հասարակության լայն շրջանակների հետ:

Մի հարցի ևս անդրադարձավ ԿԳ նախարարը. անելիքներ շատ կան ինչպես ավագ դպրոցների, այնպես էլ Ստեփանակերտում գործող ռազմամարզական վարժարանի ուղղությամբ: Ընդհանրապես, այս խնդիրը՝ մասնագիտական կողմնորոշումը, հրատապ է բոլոր դպրոցներում: Առավել ընդունակություն ունեցող երեխաներին պետք է ուղղորդել դեպի ռազմական մասնագիտություններ՝ ապագայում ՊԲ սպայական կազմը որակյալ կադրերով համալրելու նպատակով:

Հանրակրթության ոլորտում անելիքները շատ են, և միանգամից չի ստացվում լուծել, նշեց նախարարը՝ ասելով, որ պարզապես պետք է կարողանալ կարևորել պետական քաղաքականությամբ սահմանված խնդիրները և տարեցտարի ավելացնել հաջողությունները:

Բուհերի միասնական և պետական ավարտական քննությունները ինչ-որ տեղ գոհացնող են այն առումով, որ կայուն ցուցանիշներ են արձանագրվում վերջին երեք տարիների ընթացքում: Այս տարվա արդյունքներով՝ լավ և գերազանց գնահատականների թիվը անցած տարվա համեմատությամբ 2 տոկոսով ավելացել է:

Չլուծված խնդիրներ կան հատկապես ավագ դպրոցներում. այստեղ ուսումնական գործընթացը դեռևս ցանկալի մակարդակի վրա չէ՝ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Առաջին պատճառն այն է, որ պետք է այդ դպրոցների ուսումնանյութական բազան հարստացնել, կահավորել բոլոր առարկաների գծով կաբինետները, այսինքն՝ ուսուցչի համար ստեղծել արդյունավետ աշխատելու բոլոր պայմանները: Բացի այդ, հանրակրթական ոլորտում ունենք որակյալ մասնագետների խնդիր, նշեց Ս. Ասրյանը: Այն դպրոցներում, որտեղ ուսուցչական կոլեկտիվը լծված է աշխատանքի, կա բարձրակարգ գիտելիքներով ներուժ, այնտեղ աշակերտները ցուցաբերում են լավագույն արդյունքներ: Կրթության գերազանցության ազգային ծրագրի առաջին պայմանը որակյալ ուսուցչական կազմն է: Այսօր այստեղ թերացումներ կան, հատկապես՝ վերաբնակեցվող շրջաններում: Բնակարանային հարցը խոչընդոտում է կառավարության որոշմամբ արտոնյալ պայմաններով ուսուցիչների գործուղմանը այս բնակավայրեր: Լուրջ մտահոգության տեղիք է տալիս նաև այն հանգամանքը, որ մանկավարժական մասնագիտություններ չեն ընտրում բարձր գիտելիքներով դիմորդները: Սա համընդհանուր խնդիր է, պետական անվտանգության հարց: Նախարարը սրանում նաև մեղավոր է համարում ուսուցիչներին, որոնք իրենց մասնագիտության նկատմամբ սեր չեն առաջացնում աշակերտների մեջ: Այնուամենայնիվ, խնդիրը լուծելի է, պարզապես պետք է միասնական ջանքեր գործադրել, կարծում է նախարարը:

Միջին մասնագիտական և արհեստագործական կրթության ոլորտում ևս որոշակի հաջողություններ նշեց նախարարը: Ներկա ցանցը բավարարում է այս հաստատությունների պահանջարկը և աշխատաշուկայի պահանջմունքները, եթե, իհարկե, համալրվեն բոլոր մասնագիտությունները: Սակայն, չնայած պահանջարկին, շինարարական և գյուղատնտեսական մասնագիտությունները հաճույքով չեն ընտրում դիմորդները, բայց բոլոր դեպքերում միջին և արհեստագործական ուսումնարանները աշխատում են համաչափորեն: Վերջին տարիներին մեծացել է հոսքը այս հաստատություններ. նախապայմանն այն է, որ կառավարության որոշմամբ ավարտողները իրավունք ունեն շարունակել ուսումը բուհերի համապատասխան մասնագիտությունների 2-րդ կուրսում: Սա, իհարկե, շահագրգռող գործոն է, բայց անհավասար պայմաններ է ստեղծել: Բանն այն է, որ բուհերի ընդունելությունը կատարվում է միասնական քննությունների արդյունքներով, իսկ այստեղ՝ արտոնյալ պայմաններով: Մի կողմից՝ գիտելիքների ստուգման այլ ձև է, մյուս կողմից՝ այլ մոտեցում է ցուցաբերվում: Եվ ստացվում է, որ միջին մասնագիտականի շրջանավարտը մեկ տարով ավելի շուտ է ավարտում: Այդ իսկ խնդիրներից ելնելով՝ նախարարությունը առաջարկել է օրենքում փոփոխություններ կատարել և նրանց ընդունել միայն հեռակա ուսուցման համակարգում:

Բարձրագույն կրթության ոլորտում անցնող տարին եղել է կրթության իրավունքի միջազգային ճանաչմանն ուղղված գործընթացի կարևոր քայլ: 2014թ. ամռանը Ստեփանակերտում անցկացված «Կրթություն առանց խտրականության. Բոլոնիայի գործընթացի համատեքստում» թեմայով միջազգային գիտաժողովը հիմք հանդիսացավ, որ մեր բուհական համակարգը հայտ ներկայացնի՝ Բոլոնիայի գործընթացում ընդգրկվելու համար: Դա մի քայլ է Արցախի՝ որպես չճանաչված երկրի կրթության իրավունքի համահավասարության պահանջի առումով, որ չպետք է ելնել քաղաքական տեսանկյունից: Իհարկե, այս ուղղությամբ մեզ մոտ պայմաններ ստեղծված են. մեր բուհերը սերտորեն կապված են հայաստանյան և նաև որոշ արտերկրյա բուհերի հետ, և Արցախի ուսանողները կարողանում են արտերկրի բուհերում սովորել: Բայց բոլոր դեպքերում խնդիրը պետք է լուծվի գլոբալ ձևով, կարծում է Ս. Ասրյանը:

Անցնող տարում նախարարության ուշադրության կենտրոնում են գտնվել նաև երեխաների ամառային հանգստի կազմակերպման հարցերը:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարը պատասխանել է նաև լրագրողների հարցերին՝ ակնկալելով, որ 2015 թվականին նույնպես կլինի ակտիվ համագործակցություն:

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՄԱՆ ԴԱՍԵՐԸ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՆ

20-րդ դարի հայտնի փիլիսոփա Բերտրան Ռասելը ասել է. «Եթե դուք չեք մտածում ձեր ապագայի մասին, այն չի էլ լինելու»: Մեր ապագան մեր երեխաներն են: Ակնհայտ է, որ այսօրվա տեղեկատվական դարում գիտելիքներ ձեռք բերելու համար երեխան պետք է պատրաստ լինի դրանք ընկալելու: Կարող ենք վստահ ասել, որ այսօրվա աշակերտը մեծապես տարբերվում է նախորդներից: Մատաղ սերնդի ձևավորումն այսօր ընթանում է արագ փոփոխվող աշխարհում, և ժամանակակից դպրոցի հիմնական առաքելությունն է՝ երեխաներին կյանքին նախապատրաստել տեղեկատվությամբ լի աշխարհին:

Ժամանակակից մարդու համար բավարար չէ օգտվել միայն գրքերից: Այսօր անհրաժեշտ է ունենալ համակարգչային գիտելիքների բազա և գործնականում դրանք կիրառելու փորձ:

Սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացման նպատակով տարրական դպրոցում արդյունավետ է սլայդ-դասախոսությունների օգտագործումը դասերի ժամանակ: Տպավորիչ կադրերի և առաջադրանքների հերթափոխումը հրապուրում է երեխաներին:

Դասի պլանավորման ժամանակ ուսուցիչը պետք է օգտագործի դիտողական նյութեր՝ նկարներ, լուսանկարներ, խաչբառեր և այդ ամենը կապակցի դասագրքի տեքստի հետ: Դասի հիմքը դասագրքային նյութերն են, բայց անհրաժեշտ է օգտագործել նաև լրացուցիչ և հետաքրքրաշարժ նյութեր՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:

Գրեթե յուրաքանչյուր երեխա տանը համակարգիչ ունի, որը հնարավորություն է տալիս իրականացնել անհատական ինքնուրույն աշխատանք: Համակարգիչների օգտագործումը դասի ժամանակ կրթության անհատականացման և մոտիվացման բարձրացման արդյունավետ միջոցներից է, որը կբերի բարենպաստ զգայական ֆոնի ստեղծման:

Վարպետ ուսուցիչը ձգտում է այն բանին, որ հենց դասի ժամանակ աշակերտները յուրացնեն դասագրքային նյութերը և միաժամանակ տիրապետեն այդ նյութերի յուրացման տեխնոլոգիային:

Նա կարող է կազմակերպել այդ գործունեությունն այնպես, որ յուրաքանչյուր աշակերտ ակտիվորեն, հետաքրքրությամբ և հրապուրանքով աշխատի դասի ժամանակ, տեսնի իր աշխատանքի արդյունքը և կարողանա գնահատել այն:

Վարպետ ուսուցիչը միաժամանակ կարող է լուծել հետևյալ խնդիրները.

-ստեղծել դրական մոտիվացում դասի ժամանակ,

-հնարավորություն ստեղծել աշակերտների ակտիվ աշխատանքի համար,

-ձևավորել ուսումնական ունակություններ,

-նպաստել ուշադրության լավագույն կազմակերպմանը,

- աշակերտներին սովորեցնել ռեֆլեկտիվ կարողություններ:

ՆՈՒՌ ծրագրով 6-րդ դասարանցիներին տրված համակարգիչներով այսօր դասեր են վարում մայրաքաղաքի դպրոցներում:

6-րդ (ռուս., հայկ.) դասարաններում ընդօրինակման դասեր են վարել ռուսաց լեզվից՝ Կարինա Աթաջանյանը (հ.3 միջն. դպրոց), Վերա Խաչատրյանը՝ (հ.7 հիմն. դպրոց), հայոց պատմությունից՝ Գայանե Ղուլյանցը (հ.3 միջն. դպրոց), աշխարհագրությունից՝ Իրինա Հովսեփյանը (հ.3 միջն. դպրոց), հայոց լեզվից՝ Ռիտա Արզումանյանը (հ.3 միջն. դպրոց), երաժշտությունից՝ Լարիսա Մկրտչյանը (հ.3 միջն.դպրոց), Նաիրա Մինասյանը՝ (հ.7 հիմն. դպրոց): Ուշադրության կենտրոնում էին բոլոր աշակերտները: Համակարգիչների օգնությամբ և՛ աշակերտները, և՛ ուսուցիչներն անհրաժեշտ տեղեկություններ էին հավաքել և ներկայացրել դասին: Պետք է նշել, որ երաժշտությունից՝ «Օպերա», հայոց լեզվից՝ «Հայաստանն իմ տունն» է, հայոց պատմությունից՝ «Արտաշես Ի-ը և նրա բարեփոխումները», աշխարհագրությունից՝ «Ավստրալիա և Անտարկտիդա» թեմաների, ռուսաց լեզվից «Օ և ա» տառերի հնչյունափոխության ուսուցումը համակարգչի միջոցով ոչ միայն հասանելի էր, այլև հետաքրքիր ու ընդօրինակելի: Տպավորիչ էին Գոհար Գասպարյանի ելույթը «Անուշ» օպերայում, Նաիրա Մինասյանի՝ ինֆորմատիկայի դասաժամին երեխաների կողմից պատրաստած classmate-ով «Paint» ծրագրում Նոր տարվա վերաբերյալ նկարները, Իրինա Հովսեփյանի վարած դասը աշխարհագրությունից՝ ողջ դասապրոցեսը կազմակերպված էր համակարգչով: Վերջինիս և հին դասը՝ «Ավստրալիայի բուսական և կենդանական աշխարհը», և՛ նորը՝ «Անտարկտիդայի հայտնագործումը», անցավ համակ ուշադրության պայմաններում, մատչելի էր բոլոր աշակերտներին: Նման դասերը շատ օգտակար են, և դասավանդողները մեծ ոգևորությամբ են աշխատում:

Տվյալ դասերին ուսուցիչները ոչ միայն ղեկավարում, այլև իրենց խթանիչ հարցերով ակտիվացնում են դասերը:

Յուրաքանչյուր դաս նոր հայտնագործություն է, որը խթանում է կրթական նոր խնդիրների լուծումը:

Մարգարիտա ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՆՈՒՌ ծրագրի արցախյան համակարգող

ՓԱՌՔԻ ՍՐԱՀ

Ստեփանակերտի Եղիշե Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցը տարեմուտի նախաշեմին ներկայացավ մի հետաքրքիր նախաձեռնությամբ. այստեղ վերաբացվեց Փառքի սրահը: Առաջին հայացքից արտառոց ոչինչ չկա, քանի որ արցախյան գրեթե բոլոր դպրոցներն ունեն Փառքի սրահ: Ճակատագիրն է մեզ այդպես թելադրում՝ ամեն մի կրթօջախում նման սուրբ վայր ունենալ:

Հ. 7 դպրոցը առաջիններից մեկն է Փառքի սրահ ստեղծել: Ինչպես տեղեկացրեց դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանը, դեռևս քսան տարի առաջ նախկին տնօրեն Օնիկ Ասրյանի նախաձեռնությամբ է այն ստեղծվել: Արցախյան պատերազմում նահատակված 64 շրջանավարտի լուսանկար կար այնտեղ տեղադրված: Անցած տարիներին, աշակերտների պրպտումների արդյունքում, ԼՂՀ զոհված ազատամարտիկների թանգարանի հետ սերտ համագործակցությամբ ի հայտ բերվեցին ևս 41 զոհված և անհայտ կորած երեք շրջանավարտներ: Դպրոցի տնօրենի մտահղացմամբ Փառքի սրահը այսօր նոր տեսք ու բովանդակություն է ստացել:

Այստեղ մտնողն մի պահ պարուրվում է խաղաղության զգացումով: Այդ զգացումը փոխանցվում է սրահի կապույտ ֆոնից: Կապույտը խաղաղության գույնն է: Իսկ ո՞րն է խաղաղության բանաձևը: Դա հասկացնել են տալիս սրահի վահանակները: Փառքի սրահի «դուռը» բացվում է «Փա՜ռք հայոց հաղթական բանակին» վահանակով: Ահա բանալին: Ակամայից մտաբերում ես հայտնի ասույթը՝ եթե ուզում ես խաղաղություն, պատրաստ եղիր պատերազմի: Միտքը լրացնելու է գալիս կողքի վահանակը, որում Հայկ նահապետի պատգամն է. «Արև բարի ընդ քեզ, հարազա՛տ: Մեզ արմեն են ասում, քանզի արարող մարդիկ ենք, հայկազուն են ասում, քանզի Հայկի ազնվական ծագումն ունենք: Իսկ մենք մեզ հայ ենք կոչում, քանզի Լույսի պահապանն ու պաշտպանն ենք, և անունը մեր կոչումն է մեր: Պատգամն այս բոլորիդ համար է, հայ լինել՝ նշանակում է լինել Լույսի մարտիկ: Եվ Լույսը պաշտպանելու պայքարը մեր սուրբ պարտականությունն է, մեր առաքելությունը: Կատարելության ձգտումը ուղին է մեր, ներդաշնակությունը իմաստն է մեր, կարեկցանքը հոգին է մեր, պատասխանատվությունը ուխտն է մեր, անբասիր պայքարը գործն է մեր, հոգու ամրությունը զենքն է մեր, անձնազոհությունը վահանն է մեր, արմատների արժևորումը ուժն է մեր, արդարությունը հենքն է մեր, արժանապատվությունը սկզբունքն է մեր: Մենք նվիրված ենք և հավատարիմ մեր սրբություններին՝ Հայք-Հայրենիքին, Հայոց մայր հողին, հավատքին և նախնիներին, որոնց արիությամբ պահպանում, պաշտպանում ենք մենք՝ դարեր ի վեր անկոտրում մնալով: Եվ առանցքն է մեր նախնիներից ժառանգած շնորհը՝ անհուն հավատը Լույսի հանդեպ: Արև բարի ընդ քեզ»: Ասել է թե՝ հազարամյակներ շարունակ հայ ազգը գոյատևել է, որովհետև հավատարիմ իր հավատքին՝ Լույսի համար է պայքարել, պաշտպանել է Լույսը:

Հաջորդ՝ «Մահ իմացյալ՝ անմահություն» վահանակին 105 նահատակների և 3 անհայտ կորածների անուններն են: Հայացքդ դանդաղ սահում է անունների վրայով. բառերն ավելորդ են, լուռ խոնարհումի պահ է: Անցնում ես հաջորդ վահանակին. ՀՀ ազգային հերոսներն են, հաջորդում՝ Արցախի հերոսները: Ահա և արդյունքը. դարեր ի վեր մեր նախահայր Հայկ դյուցազնի բազկի ուժով և արի ոգով տոգորված՝ հայոց նորօրյա քաջորդիները, իրենց գլուխը դնելով հայրենիքի զոհասեղանին, կերտել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Եվ Փառքի սրահի մի մասում էլ մեր պետականությանը նվիրված անկյունն է՝ իր խորհրդանիշներով. Արցախի Հանրապետության Օրհներգը, Դրոշը, Զինանշանը: Ուրեմն, հայ քաջորդիները զուր չեն հեղել իրենց արյունը հայրենի հողին. կռել են ազատ ու անկախ հանրապետություն և թանկ ժառանգություն փոխանցել սերունդներին: Հաջորդում է մեծն Չարենցի, ում անունն է կրում կրթօջախը, մեծադիր նկարը, և լռելյայն մտմտում ես նրա իմաստուն գաղափարագիրը. «Ով հայ ժողովուրդ, քո փրկությունը քո միասնական ուժի մեջ է»: Սա յուրաքանչյուր հայի ամենամեծ դասն է, իսկ «Որպես անհաս փառքի ճամփա ես իմ Մասիս սարն եմ սիրում» միտքը՝ մեր նորօրյա աղոթքը:

Հաջորդ վահանակը դպրոցի անցած ուղին է խորհրդանշում: Ամուր է դպրոց-բանակ-հասարակություն կապը՝ ուրեմն ամուր է մեր սուրբ հողը: Եվ նրա ապագան անպայման կլինի պայծառ, հայոց սուրբ հողում միշտ խաղաղությունը կիշխի: Դպրոցն, իրոք, այն օջախն է, որտեղ ռազմահայրենասիրական դաստիարակության հիմքերն են ամուր դրված:

Փառքի սրահում նաև մեր Հավատքի խորհրդանիշն է, որը մեր ազգային գաղափարախոսության հիմքն է, հանուն որի պայքարել է հայ ազգը ու դարերի մեջ գոյատևել:

Հաջորդ անկյունը, որտեղ պատկերված է մեր մեծ ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցը՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» իմաստուն տողերով, արտացոլում է այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ, առավելապես զինվորական, պետք է լինի ուսյալ, կիրթ, զարգացած, քանի որ դարի մարտահրավերները դա են պահանջում, ու հենց դրանով է պայմանավորված մեր բանակի հզորությունը:

Եվ ահա տրամաբանական ավարտը «Ղարաբաղ-երկիր՝ դրախտ հայրենի» վահանակն է՝ հայության նորօրյա խորհրդանիշը դարձած, արմատները մայր հողում թաղած Տատիկ-Պապիկով: Սա է Հավերժության ճանապարհը: Եվ դա է արտացոլում Փառքի սրահը:

Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին որդեկորույս մայրեր, ԼՂՀ պաշտպանության, կրթության և գիտության նախարարությունների, քաղաքային իշխանությունների, հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ, թոշակառու ուսուցիչներ, դպրոցականներ: Արարողությունը սկսվելուց առաջ Փառքի սրահ էր այցելել ԼՂՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար Մովսես Հակոբյանը:

Հանդիսավոր արարողությունը մեկնարկեց դպրոցի բակում: Ներկաները ծաղիկներ խոնարհեցին Արցախյան գոյամարտում նահատակված հայորդիների հիշատակը հավերժացնող խաչքարին: Այնուհետև Փառքի սրահում տեղի ունեցավ բուն արարողությունը: Դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանի ելույթում պաթոսը և զգացմունքը միախառնվել էին: Դպրոցն այս ուսումնական տարում կտա իր 50-րդ թողարկումը: Հինգ տասնամյակների ընթացքում դպրոցը կրթել ու դաստիարակել է շուրջ 6 հազար շրջանավարտ, որից 2075-ը ստացել են միջնակարգ կրթության ատեստատ, իսկ մյուսները՝ հիմնական դպրոցի վկայական: Դպրոցի գերագույն նպատակը մեկն է եղել՝ աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ բարձր պահել հայ ոգին: Դպրոցի մանկավարժները միշտ էլ մեծ պատասխանատվությամբ են կազմակերպել դասերը՝ քաջ գիտակցելով, որ իրենց սաները պետք է մի օր պոռթկան, պայքարի ելնեն պապենական հողերի իսկական տերը դառնալու վճռականությամբ: Հպարտությամբ նշեց, որ ինքն էլ ավարտած լինելով Չարենցի անվան դպրոցը, վկան է այն հայրենաշունչ դասերի, որ վարել են ուսուցիչները՝ կրթելով ու դաստիարակելով Չարենցի հայրենաշունչ գաղափարներով ու հայրենասիրական վեհ նպատակներով:

Ավանդույթները շարունակվում են վերակերտմամբ. դպրոցի սաներն այսօր հերոսանալու օրինակները սերտում են ոչ միայն Հայկ նահապետից, այլև խիզախ տղաներից, ովքեր նահատակվեցին հանուն մեր սուրբ հողի: Մեր խոնարհումը նրանց մայրերին, քանզի հերոսների մայրերը ևս հերոսներ են: «Ձեր հերոս որդիները ողջ են բոլոր ապրողների սրտերում, նրանց հրեղեն ոգին դպրոցի կամարների տակ է, յուրաքանչյուր դասարանում, յուրաքանչյուր դասաժամի»,-դպրոցի մանկավարժական կոլեկտիվի անունից հավաստիացրեց տնօրենը: Նա իր երախտագիտությունը հայտնեց Պաշտպանության բանակի հրամանատարությանը, որի օժանդակությամբ կյանքի կոչվեց Փառքի սրահը: Շնորհակալաբար նշեց, որ Փառքի սրահի իրենց մտահղացումը դիզայներական բարձր ոճով իրականացրել է Վալերի Պետրոսյանը, ով նաև Ասկերանի շրջանային «Բերդ» թերթի խմբագիրն է:

Ա. Պողոսյանի երախտագիտության խոսքը ուղղված էր նաև ՊԲ հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանին՝ Փառքի սրահի վերականգնմանն իր անմիջական մասնակցության, տարիներ շարունակ դպրոցում արիության դասեր վարելու համար:

-Մենք փորձել ենք մի քիչ մարտական ոգի հաղորդել Փառքի սրահին, որտեղ յուրաքանչյուր տղա աշակերտ, երբ մտնի այստեղ, ոգևորվի և իրեն նախապատրաստի ապագա զինվոր դառնալուն: Եվ յուրաքանչյուր աղջիկ աշակերտ, այստեղ մտնելով որպես ապագա մայր՝ նույն ոգևորությամբ կարողանա իր երեխային դաստիարակել հայրենասիրությամբ,-ասաց գեներալը:

-Երևի սա օրինակ կծառայի, որպեսզի մեր մյուս դպրոցներում սկսեն այս աշխատանքները նոր թափով իրականացնել,- ասաց ԼՂՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը:- Նույնիսկ անծանոթ մարդը որ հայացք ձգի՝ ահագին դասեր կքաղի: Եզրակացությունը մեկը կարող է լինել՝ արցախցին անպարտելի է, որովհետև կարևորում է անցյալը, հիշում իր հերոսներին, մեծարում նրանց:

-Բա՛վ է, որ մենք միայն լացել գիտեինք նկարների առաջ: Եկեք խոնարհվենք անունների առաջ և փառքով սկսենք մեր հերոսական օրը՝ տոգորված Հայկ նահապետի պատգամներով, հայրենի հողում ապրելու մեծագույն իրավունքով: Մեր ամեն մի օրը, ամեն մի գործը սկսենք նահատակների հիշատակի առաջ խոնարհումով: Մեր փառքի սրահների համար սա կլինի ընդօրինակելի այն տեսակետից, որ այստեղ հայրենասիրական բոլոր գաղափարները՝ դպրոց, հայրենիք և հավատ, միահյուսվում են,-ասաց Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ Կ. Մարգարյանը:

-Ես համոզված եմ, որ գալիք սերունդներն ավելի նվիրյալներ կլինեն: Իսահակյանը շատ գեղեցիկ միտք է ասել՝ զինվորը պիտի խաղաղության մեջ, այլ ոչ թե մարտում սրի զենքերը, միշտ կազմ ու պատրաստ, աչալուրջ լինի: Մեծ բանաստեղծը նաև պատգամել է, որ սրբած թրի դեմ թշնամին միշտ անզոր է: Համոզված եղեք, մեր բանակը միշտ կլինի կուռ և այնպիսի պաշտպանություն կապահովի, որ թշնամին մեզանից կսարսափի: Դրա վկայությունն այսօր սահմանում կատարվող իրադարձություններն են,- ասաց ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Նաիրա Թամրազյանը, նաև ում հայրենաշունչ դասերով են դաստիարակվել հ. 7 դպրոցի սաները:

-Դեռ մանկուց, հեքիաթ կարդալու փոխարեն ես ու քույրս թերթում էինք մեր հերոս հայրիկի 22 գարուններ ապրած կյանքի պատմության էջերը, և ամեն մի էջ մեզ համար իր խորհուրդն ունի,-ասաց զոհված ազատամարտիկի դուստր Մարգարիտա Հովսեփյանը:

Իսկ դպրոցականները Փառքի սրահի խորհրդանշական անկյուններին համահունչ բանաստեղծություններ ու երգեր հնչեցրին:

Հուզմունքից պահերը շարունակվեցին դպրոցի դահլիճում, որտեղ համակարգչի միջոցով էկրանին հայտնվեցին բոլոր 108 նվիրյալները, մեկ-մեկ հնչեցին նրանց անունները:

Զոհված ազատամարտիկի մայր Դոնարա Վելյանը, խեղդելով վիշտը, որդեկորույս ծնողների անունից շնորհակալություն հայտնեց դպրոցի տնօրինությանն ու մանկավարժական և աշակերտական կոլեկտիվներին՝ իրենց որդիների հիշատակը անմահացնելու համար: «Վիշտս խորն է, բայց հպարտ եմ, որ իմ տղան իր կյանքը նվիրաբերել է հանուն մեր սուրբ հողի»,-ասաց նա:

Հայրենաշունչ երգ-երաժշտությունը ներկաներին ուղեկցում էր նաև այստեղ, և չես կարող չհավատալ, որ նման ոգով դաստիարակված սերնդին հաղթելն անհնար է...

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՆՈՒՆՆ ՈՒ ՍԽՐԱՆՔԸ՝ ԱՆՄՈՌԱՑ

Ստեփանակերտի Ավ. Իսահակյանի անվան հ. 10 դպրոցի 8-րդ «ա» դասարանի աշակերտները, դասղեկ Անահիտ Պողոսյանի գլխավորությամբ, կազմակերպեցին հուշ-ցերեկույթ՝ Արցախյան պատերազմում զոհված դպրոցի շրջանավարտ Վագիֆ-(Արարատ) Զաքարյանի ծննդյան 40-րդ տարեդարձի կապակցությամբ: Նրա անունն է կրում այդ դասարանը: Դպրոցի դահլիճում հավաքվել էին դպրոցականներ, ուսուցիչներ, ներկա էին տնօրենն ու փոխտնօրենները, հերոսի մայրը, հարազատները: Միջոցառումը վարող՝ ՄԿԱԳՏՏ Անահիտ Սարգսյանը խորին հարգանքի ու երախտագիտության խոսք ասաց Արցախյան պատերազմում նահատակված քաջորդիների հասցեին, որոնցից մեկն էլ Վագիֆ (Արարատ) Զաքարյանն էր: Նա մեկն էր այն քաջազուններից, ովքեր գիտակցելով մեր ժողովրդի արդար պայքարի նշանակությունը, առանց երկմտելու, կամովին նետվեցին այդ հորձանուտի մեջ:



Աշակերտները սկզբում փոքրիկ բեմականացում ներկայացրին Արցախյան գոյամարտի այն շրջանը պատկերող, երբ քաջորդիները, գիտակցելով, որ միայն զենքի ուժով կարող են պահպանել հայրենիքը, կամովին զինվորագրվում էին մայր հայրենիքի պաշտպանությանը՝ ասելով. «Մա՛յր իմ, ժամանակ կանցնի և կհամոզվես, որ ճիշտը սա է»: Եվ դպրոցի աշակերտ Անդրանիկ Վերդյանը իր առաջին երգը՝ «Հայոց մայրեր», ձոնում է հենց քաջածին մայրերին: Երեխաները շարունակում են իրենց խոսքը, և ներկաների աչքերի առաջ հառնում է պատանյակը, որն ընտանիքով մազապուրծ փրկվելով սումգայիթյան սպանդից՝ ապաստան է գտնում հայրենիքում: Ուսումը շարունակել է հ. 10 միջնակարգ դպրոցում: 8-ամյա կրթություն ստանալուց հետո տեղափոխվել է հայրենի Նորագյուղ, որտեղ էլ ավարտել է 11-րդ դասարանը: 1993թ. հունվարին կամավորագրվել է Ասկերանի գնդի 3-րդ վաշտին և մի քանի ամիս անց, ցավոք, զոհվել:

Աշակերտների ելույթներում ափսոսանք կար, որ քաջորդու ծննդյան օրը նշում են առանց նրա ֆիզիկական ներկայության, բայց նաև՝ սփոփանք, որ նրա անունն անմոռաց է, քանզի նրա մասին հիշողությունը կփոխանցվի սերնդեսերունդ:

«Արիության համար» մեդալը, որ ստացել է քաջորդին, ընդամենը մի մասնիկն է նրա նկատմամբ ապրողների մեծ հարգանքի, սիրո ու հիշողության:

Մայրը՝ տիկին Գալյան, հուզմունքից կարկամած՝ հազիվ կարողացավ շնորհակալություն հայտնել դպրոցի մանկավարժական ու աշակերտական կոլեկտիվներին՝ իր որդու հիշատակը այդպես հարգելու համար: Եվ ստացավ համարժեք պատասխանը. «Այդ մենք ենք գլուխ խոնարհում Ձեր առաջ, որ այդպիսի քաջ զավակ եք ծնել...»:

Հետաքրքիր էր լսել հարազատների պատմությունը քաջորդու անվան մասին: Քույրը պատմեց, որ եղբայրը երբեք չի սիրել իր Վագիֆ անունը, դեռ Սումգայիթում իրեն Արարատ էր կոչել և մտադրվել էր, որ երբ 16 տարեկան դառնա ու անձնագիր ստանա, անպայման կփոխի անունը: Սակայն ժամանակները խառն էին, և այդ հարցով զբաղվելու ժամանակ չկար, և թեպետ անձնագրով չդարձավ Արարատ, սակայն ճանաչողների հիշողության մեջ նա մնաց այդ անունով:

Դեռ անչափահաս, իրենց գյուղում, որտեղ զինվորներ էին ծառայում, օգնում էր նրանց. ինքնաձիգներն էր մաքրում, կատարում նրանց հանձնարարությունները: Իսկ հենց 18-ը լրացավ, մտավ Պաշտպանության բանակ:

21 տարի է՝ հարազատներն ապրում են թանկ կորստյան զգացումը հոգում: Ոչինչ չի կարող սփոփել նրանց վիշտը, թերևս փոքրինչ՝ ապրողներիս ուշադրությունը, նրանց հոգատարությամբ շրջապատելու պատրաստակամությունը, ինչն էլ դաստիարակում է մատաղ սերնդի մեջ արցախյան դպրոցը:

Սեփ. լրատվություն

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» դեկտեմբեր 2014 թ. N 893-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2015-2016 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«23» դեկտեմբեր 2014 թվականի
N 893-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ի. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծած-կագիր	Մասնագիտության անվանումը	Ընդունելության քննություններ			
		Մրցութային քննություններ			Ոչ մրցութային քննություններ
1	2	3	4	5	6
•010300	Մաթեմատիկա: Համակարգչային գիտություններ	Մ(գ)	Ֆ(գ)** կամ Մեգլ(գ)**		Հլգ(գ)*
010400	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)** կամ Մեգլ(գ)**		Հլգ(գ)*
•010600	Ֆիզիկա	Ֆ(գ) կամ Մ(գ)	Մ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*
•020100	Քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
020200	Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
020400	Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)**		Հլգ(գ)*
030200	Քաղաքագիտություն	ՀԺՊ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
030400	Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Օտլ (գ)	Հլգ(գ)	
030500	Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
030600	Լրատվություն	ԱԼ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
031000	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
031300	Մեգլերեն լեզու և գրականություն	Մեգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
032100	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ	Մասն.	ԸՊ		Հլգ(գ)*
032300	Ճարտարագիտական գործ՝ անգլերեն և իսպերեն լեզուներ	Մեգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
032400	Ռուսաց լեզու և գրականություն	Ռ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
050400	Նախադպրոցական և ֆիզիկական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՊ		Հլգ(գ)*
050800	Կերպարվեստ և գծագրություն	Գծն	Գն		Հլգ(գ)*
051000	Մանկավարժություն և հոգեբանություն (նախադպրոցական)	Հլգ(գ)	Մ(գ)**		
051100	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	Հլգ(գ)	Մ(գ)**		
080100	Տնտեսագիտության տեսություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
080300	Ֆինանսներ	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
081300	Կառավարման տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
081500	Հաշվապահական հաշվառում	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
140200	Էլեկտրաէներգետիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
270100	Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

• - Նշված մասնագիտություններով ԱրՊՀ առկա ուսուցման համակարգի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Մրցութային երկու առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծած-կագիր	Մասնագիտության անվանումը	Ընդունելության քննություններ			
		Մրցութային քննություններ			Ոչ մրցութային քննություններ
1	2	3	4	5	6
010300	Մաթեմատիկա: Համակարգչային գիտություններ	Մ(գ)	Ֆ(գ)** կամ Մեգլ(գ)**		Հլգ(գ)*
010600	Ֆիզիկա	Ֆ(գ) կամ Մ(գ)	Մ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*
020100 020200	Քիմիա, Կենսաբանություն	Ք(գ)	Կ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
020400	Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)**		Հլգ(գ)*
030300	Հոգեբանություն	Հլգ(գ)	Օտլ (գ)	Կ(գ) **	
030400	Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Օտլ (գ)	Հլգ(գ)	
030500	Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)	
031000	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
032400	Ռուսաց լեզու և գրականություն	Ռ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
050400	Նախադպրոցական և ֆիզիկական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՊ		Հլգ(գ)*
051100	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	Հլգ(գ)	Մ(գ) **		
080100	Տնտեսագիտության տեսություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
140200	Էլեկտրաէներգետիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
190200	Տրանսպորտային ուղիների, միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծածկագիր	Մասնագիտության անվանումը	Ընդունելության քննություններ			
		Մրցութային քննություններ			Ոչ մրցութային քննություններ
1	2	3	4	5	6
190300	Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	Մ(գ)	Ֆ(գ)***		Հլգ(գ)*
• 310102	Ագրոնոմիա (լայն պրոֆիլի մասնագիտությունների հնարավորություններով)	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Ք(գ)**		Հլգ(գ)*
• 310201	Մեխանիզացիա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Ք(գ)**		Հլգ(գ)*
• 310302	Մեխանիզացիա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Ք(գ)**		Հլգ(գ)*
• 310506	Ագրոէկոլոգիա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Ք(գ)**		Հլգ(գ)*
• 310801	Գյուղատնտեսության մեքենայացում	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
310901	Հողաշինարարություն և հողային կադաստր	Մ(գ)	Ֆ(գ)***		Հլգ(գ)*
311101	Ագրոպրոֆիլ արտադրության էլեկտրոֆիկացում և կառավարում	Մ(գ)	Օտլ (գ) ***		Հլգ(գ) *
311103	Ագրոպրոֆիլ համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
311112	Ագրոպրոֆիլ համակարգի ֆինանսների կառավարում	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ

2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծածկագիր	Մասնագիտության անվանումը	Ընդունելության քննություններ			
		Մրցութային քննություններ			Ոչ մրցութային քննություններ
1	2	3	4	5	6
190300	Փոխադրամիջոցների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
•310102	Ագրոնոմիա (լայն պրոֆիլի մասնագիտությունների հնարավորություններով)	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Բ(գ)**		Հլգ(գ)*
•310201	Անասնաբուծություն	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Բ(գ)**		Հլգ(գ)*
•310301	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Բ(գ)**		Հլգ(գ)*
•310506	Ագրոէկոլոգիա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Բ(գ)**		Հլգ(գ)*
•310801	Գյուղատնտեսության մեքենայացում	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
310901	Հողաշինարարություն և հողային կադաստր	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
311101	Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում	Մ(գ)	Օտլ (գ)**		Հլգ(գ)*
311103	Ագրոարբենային հանձնարարի հաշվապահական հաշվառում և աուդիտ	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
311112	Ագրոարբենային հանձնարարի ֆինանսների կառավարում	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	

• - Նշված մասնագիտություններով ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար, որպես մրցութային առարկաների գնահատական, դիմորդը կարող է դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Մրցութային առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծած-կագիր	Մասնագիտության անվանումը
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0602	Մենեջմենթ (Կառավարում) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0603	Ֆինանսներ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2401	Փոխադրամիջոցների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
3101	Հողաշինարարություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
3102	Գյուղատնտեսագիտություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
3103	Անասնաբուծություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
3104	Անասնաբուժություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
3106	Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
3204	Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

II. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծած-կագիր	Մասնագիտության անվանումը	Ընդունելության քննություններ			
		Մրցութային քննություններ			Ոչ մրցութային քննություններ
030400	Պատմություն	Հժպ(գ)	Ընդ(գ) կամ Օտլ (գ)	Հլգ(գ)	
030500	Իրավագիտություն	Հլգ(գ)	Հժպ(գ)	Օտլ (գ)	
030600	Լրագրություն	ՍԱ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
031000	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	Հժպ(գ)**		Օտլ(գ)*
031300	Անգլերեն լեզու և գրականություն***	Անգլ(գ)	Հլգ(գ)		Հժպ(գ)*
032400	Ռուսաց լեզու և գրականություն***	Ռլ(գ)	Հլգ(գ)		Հժպ(գ)*
050400	Նախադպրոցական և ֆիզիկական պատրաստություն	ՆՀՊ (բ)	ԸՆՊ		Հլգ(գ)*
051100	Սանիտարական գործություն և մերոդիկա (տարրական կրթության)	Հլգ(գ)	Մ(գ)**		
080100	Տնտեսագիտության տեսություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
230100	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա***	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծած-կագիր	Մասնագիտության անվանումը	Ընդունելության քննություններ			
		Մրցութային քննություններ			Ոչ մրցութային քննություններ
030400	Պատմություն	Հժպ(գ)	Ընդ(գ) կամ Օտլ (գ)	Հլգ (գ)	
030500	Իրավագիտություն	Հլգ(գ)	Հժպ(գ)	Օտլ (գ)	
030600	Լրագրություն	ՍԱ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
031000	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	Հժպ(գ) **		Օտլ(գ)*
032400	Ռուսաց լեզու և գրականություն ***	Ռլ(գ)	Հլգ(գ)		Հժպ(գ)*
050400	Նախադպրոցական և ֆիզիկական պատրաստություն	ՆՀՊ (բ)	ԸՆՊ		Հլգ(գ)*
051100	Սանիտարական գործություն և մերոդիկա (տարրական կրթության)	Հլգ(գ)	Մ(գ) **		
080100	Տնտեսագիտության տեսություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
230100	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա***	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

1.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծած-կագիր	Մասնագիտության անվանումը
0207	Ճարտարապետություն և գրաֆիկական դիզայն (հիմնական կրթությամբ)
0302	Հայոց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ)
0303	Ռուսաց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ)
0307	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ (հիմնական կրթությամբ)
0312	Դասավանդում տարրական դասարաններում (հիմնական կրթությամբ)
0313	Նախադպրոցական կրթություն (հիմնական կրթությամբ)
0416	Առաջնաստեղծիչական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (հիմնական կրթությամբ)
0602	Մենեջմենթ (կառավարում) (հիմնական կրթությամբ)
0603	Ֆինանսներ (հիմնական կրթությամբ)
2203	Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրավորում (հիմնական կրթությամբ)
2307	Զբոսաշրջություն (հիմնական կրթությամբ)
2401	Փոխադրամիջոցների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծած-կագիր	Մասնագիտության անվանումը	Ընդունելության քննություններ			
		Մրցութային քննություններ			Ոչ մրցութային քննություններ
030400	Պատմություն	Հժպ(գ)	Ընդ(գ) կամ Օտլ (գ)	Հլգ(գ)	
030500	Իրավագիտություն	Հլգ(գ)	Հժպ(գ)	Օտլ (գ)	
030600	Լրագրություն	ՍԱ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
031000	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	Հժպ(գ) **		Օտլ(գ)*
031300	Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		Հժպ(գ)*
032300	Ճարտարապետական գործ՝ անգլերեն և իսպերեն լեզուներ	Անգլ(գ)	Հլգ(գ)		Հժպ(գ)*
032400	Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		Հժպ(գ)*
051100	Սանիտարական գործություն և մերոդիկա (տարրական կրթության)	Հլգ(գ)	Մ(գ) **		
080200	Կառավարում	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
230100	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
230200	Տեղեկատվական համակարգեր (ըստ ճյուղերի)	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ

2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծած - կագիր	Մասնագիտության անվանումը	Ընդունելության քննություններ			
		Մրցութային քննություններ			Ոչ մրցութային քննություններ
030400	Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Օտլ (գ)	Հլգ(գ)	
030500	Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
030600	Լրագրություն	ՍԱ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
031000	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
031300	Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
032400	Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
051100	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	Հլգ(գ)	Մ(գ) **		
080100	Տնտեսագիտության տեսություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
230200	Տեղեկատվական համակարգեր (ըստ ճյուղերի)	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

3. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՅՈՒՐՋՅԱՆ» ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծած - կագիր	Մասնագիտության անվանումը	Ընդունելության քննություններ			
		Մրցութային քննություններ			Ոչ մրցութային քննություններ
070900	Դիզայն	Կոմ	Գծն	ԳՆ	Հլգ(գ)*
072400	Հագուստի մոդելավորում	Կոմ	Գծն	ԳՆ	Հլգ(գ)*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

(բ)	բանավոր	ՀԺՊ	Հայ ժողովրդի պատմություն
(գ)	գրավոր	Հլգ	Հայոց լեզու և գրականություն
Ա	Աշխարհագրություն	Մ	Մաթեմատիկա
Անգլ	Անգլերեն	ՆԶՊ	Նախնական զինվորական պատրաստություն
Գծն	Գծանկար	Ռլ	Ռուսաց լեզու
ԳՆ	Գունանկար	ՍԱ	Ստեղծագործական աշխատանք
ԸՊ	Ընդհանուր պատմություն	Ք	Քիմիա
ԸՖՊ	Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն	Օտլ	Օտար լեզու****
		Ֆ	Ֆիզիկա
Կ	Կենսաբանություն	Մասն.	Մասնագիտական
Կոմ.	Կոմպոզիցիա		

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ր

* Ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

**Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

***Ոչ պետական բուհի չհավատարմագրված մասնագիտություն:

****Օտար լեզու (Ռուսաց լեզու, Անգլերեն, Գերմաներեն, Ֆրանսերեն):

Օտար լեզու մրցութային կամ ոչ մրցութային քննություն կարող է ընտրվել նշված 4 առարկաներից մեկը՝ դիմորդի հայեցողությամբ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» դեկտեմբերի 2014 թ. N 894-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *ո ր ո շ ու մ է.*

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2015-2016 ուսումնական տարվա մասնագիտությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«23» դեկտեմբերի 2014 թվականի
N 894-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Թ. ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծածկագիր	Մասնագիտությունը
0402	Մանկաբարձական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0405	Դեղագործություն (միջնակարգ կրթությամբ)
0406	Քույրական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0418	Բուժական գործ զինված ուժերում (հիմնական կրթությամբ)

2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծածկագիր	Մասնագիտությունը
0501	Գործիքային կատարողական արվեստ այդ թվում՝ դաշնամուր, լարային գործիքներ (ջութակ), փողային գործիքներ, ժողովրդական գործիքներ
0502	Երգեցողություն
0503	Երգչախմբավարություն
0504	Երաժշտության տեսություն
0505	Էստրադային երաժշտարվեստ

3. ՇՈՒՇԻԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

3.1 ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ծածկագիր	Մասնագիտությունը
0514	Դիզայն ըստ ճյուղերի (հիմնական կրթությամբ)
0515	Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ ըստ ճյուղերի (հիմնական կրթությամբ)
0518	Սոցիալ-մշակութային գործունեություն և ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություն (հիմնական կրթությամբ)
2014	Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (հիմնական կրթությամբ)
2307	Զբոսաշրջություն (հիմնական կրթությամբ)

3.2 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ծածկագիր	Մասնագիտությունը
0517	Գրադարանային գործ (միջնակարգ կրթությամբ)
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (միջնակարգ կրթությամբ)

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ

4. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ

Ծածկագիր	Մասնագիտությունը
0319	Պարի ուսուցում
0509	Պարարվեստ (ժողովրդական պար)

5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծածկագիր	Մասնագիտությունը
0515	Զարդակիրառական արվեստ (հիմնական կրթությամբ
1207	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա (միջնակարգ կրթությամբ)
2203	Համակարգիչների շահագործում (միջնակարգ կրթությամբ)
2304	Վարսավիրական արվեստ և գարդարային դիմահարդարում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2311	Հասարակական սնունդ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա (միջնակարգ կրթությամբ)
2902	Շինարարական մոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում (որմնադիր) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2905	Ճանապարհաշինարարական և բարեկավման աշխատանքների տեխնիկական սպասարկում (բուլդոզերավար, էքսկավատորավար, տրակտորիստ) (միջնակարգ կրթությամբ)
2907	Ատաղձագործություն, մանրահատակագործություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (երեսպատող, սալիկապատող, ծեփագործ, ներկարար) (հիմնական կրթությամբ)

6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծածկագիր	Մասնագիտությունը
1207	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ)
2203	Համակարգիչների շահագործում (հիմնական կրթությամբ)
2304	Վարսավիրական արվեստ և գարդարային դիմահարդարում (միջնակարգ կրթությամբ)
2311	Հասարակական սնունդ (միջնակարգ կրթությամբ)
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (հիմնական կրթությամբ)
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ)
2905	Ճանապարհաշինարարական և բարեկավման աշխատանքների տեխնիկական սպասարկում (տրակտորիստ) (հիմնական կրթությամբ)
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (երեսպատող, սալիկապատող, ծեփագործ, ներկարար) (հիմնական կրթությամբ)

7. ՇՈՒՇԻԻ ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Ծածկագիր	Մասնագիտությունը
1006	Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում (կաթսաների մեքենավար, կաթսայատան օպերատոր, կաթսայատներ սպասարկող փականագործ, ջերմային ցանցեր սպասարկող փականագործ, կաթսայատների սարքավորումներ նորոգող փականագործ, ջերմային ցանցերի սարքավորումներ նորոգող փականագործ) (հիմնական կրթությամբ)
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (երեսպատող-սալիկապատող, փոքրետիկ նյութերով երեսպատող, երեսպատող-մարմարագործ, խճանկարիչ, ծեփագործ, ներկարար) (հիմնական կրթությամբ)
2912	Շենքերի և կառույցների սանիտարատեխնիկական սարքավորումներ (սանիտարատեխնիկական համակարգերի և սարքավորումների մոնտաժող, օդափոխման և պնևմատրանսպորտի մոնտաժում, սանիտարատեխնիկական համակարգերի հանգույցների և դետալների փականագործ, փականագործ-սանտեխնիկ) (հիմնական կրթությամբ)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋԸ

Սիրելի՛ տիկին Ելիզավետա Միրզոյան

ԼՂՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչությունը սրտանց շնորհավորում է Ձեզ՝ 60-ամյա հոբելյանի առթիվ:

Դուք մեծ վաստակ ունեք կրթության ասպարեզում: Շուրջ չորս տասնյակ տարի աշխատել եք այս ոլորտում. որպես ուսուցիչ, այնուհետև՝ որպես դասախոս Ձեր ներդրումն եք ունեցել մատաղ սերնդի կրթության և դաստիարակության, նրանց բարոյական որակների ձևավորման գործում: Այսօր Դուք շարունակում եք ձեր աշխատանքը կրթության պետական տեսչությունում՝ Ձեր փորձը փոխանցելով հանրապետության մայրենիի ուսուցիչներին:

Ձեր մարդկային արժանիքներով, կենսախինդ բնավորությամբ, ճոխ լեզվով, առարկայի խոր իմացությամբ, կանացի առաքինությամբ դարձել եք շրջապատի սիրելին:

Ապրեք ավյունով, հաստատուն քայլերով շարունակեք Ձեր ստեղծագործ ուղին:

Երջանիկ մնացեք Ձեր ընտանիքով ու զավակներով:

ԼՂՀ ԿԳՆ կրթության պետական տեսչություն

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ր Ա Մ Ա Ն

«20» դեկտեմբերի 2014 թ. N 275/Մ

ք. Ստեփանակերտ

Հանրակրթական առարկաների նկատմամբ հատուկ կարողություններ ունեցող և առանձին հետաքրքրություն ցուցաբերած սովորողների վերհանման, ինչպես նաև գիտության հիմունքների ուսումնասիրման նկատմամբ սովորողների շրջանում հետաքրքրություն առաջացնելու նպատակով

հրամայում եմ.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2014-2015 ուստարում դպրոցականների առարկայական օլիմպիադան կազմակերպել ու անցկացնել 3 փուլով՝ ներքոբերյալ առարկաների գծով.

- հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, օտար լեզու (անգլերեն, գերմաներեն), պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա և նախնական զինվորական պատրաստություն.

- դպրոցական՝ 1-ին փուլ - 2015թ.հունվարի 20-31-ը

- շրջանային (քաղաքային)՝ 2-րդ փուլ- 2015թ. փետրվարի 11-14-ը

- հանրապետական՝ 3-րդ փուլ- 2015թ.փետրվարի 20-ից մարտի 15-ը, Ստեփ. հ.2 հիմնական դպրոցում:

Օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլին միևնույն դպրոցականին մի քանի առարկայից մասնակցելու հնարավորություն տալու նպատակով 2-րդ փուլը կանցկացվի հետևյալ ժամանակացույցով.

- հայ գրականություն, հայոց եկեղեցու պատմություն, ֆիզիկա, ինֆորմատիկա առարկաների օլիմպիադաներն անցկացնել փետրվարի 11-ին.

- հայոց լեզու, մաթեմատիկա, քիմիա առարկաների օլիմպիադաներն անցկացնել փետրվարի 12-ին.

- ռուսաց լեզու, պատմություն, կենսաբանություն առարկաների օլիմպիադաներն անցկացնել փետրվարի 13-ին.

- օտար լեզու, նախնական զինվորական պատրաստություն, աշխարհագրություն առարկաների օլիմպիադաներն անցկացնել փետրվարի 14-ին:

2. Օլիմպիադաների կազմակերպման ու անցկացման համար ստեղծել կազմկոմիտե՝ հետևյալ կազմով.

Համբարձումյան Մ. - ԼՂՀ ԿԳ փոխնախարար, կազմկոմիտեի նախագահ,

Մուսայելյան Ռ. - ԼՂՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ԿԳ վարչության պետ, կազմկոմիտեի նախագահի տեղակալ,

Արզումանյան Ս.- նախարարության կրթության պետական տեսչության պետ,

Բոզիյան Ռ.- ԿԳ վարչության հանրակրթության բաժնի վարիչ,

Մարգարյան Կ. - Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ,

Բաղունց Մ.- նախարարության ֆինանսատնտեսական բաժնի վարիչ,

Թևոսյան Մ.- նախարարության տնտեսվար,

Մարտիրոսյան Լ.- Ստեփանակերտի հ.2 հիմնական դպրոցի տնօրեն:

3. Նախարարության կրթության և գիտության վարչությանը, կրթության պետական տեսչությանը՝

ա) նախապատրաստել ԼՂՀ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի շրջանային (քաղաքային) 2-րդ փուլի անցկացման առաջադրանքները. ժամկետը մինչև փետրվարի 1-ը,

բ) լրատվական միջոցներով, «Լուսաբար» պաշտոնաթերթի էջերում լուսաբանել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների նախապատրաստման ընթացքն ու արդյունքները,

գ) «ԼՂՀ դպրոցականների 2014-2015 ուստարվա հանրապետական օլիմպիադայի արդյունքների մասին» հարցը ներկայացնել նախարարին կից խորհրդակցության քննարկմանը:

4. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) օլիմպիադայի 1-ին փուլի առաջադրանքները կազմվում են ԼՂՀ շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժինների (այսուհետ՝ կրթության բաժիններ) առարկայական մեթոդխորհուրդների կողմից՝ հանրակրթական դպրոցների առարկայական մեթոդխորհուրդների առաջարկությունների հիման վրա.

բ) օլիմպիադայի 2-րդ փուլի առաջադրանքները կազմվում են նախարարության մասնագետների կողմից.

գ) օլիմպիադայի հանրապետական 3-րդ փուլն անց է կացվում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմված մարզային փուլի առաջադրանքներով (ժամանակացույցը և ըստ առարկաների հանրապետական փուլի մասնակիցների սահմանված թվաքանակի տեղեկությունները կցվում են՝ համաձայն հավելված 1 և 2).

դ) ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական 3-րդ փուլում հաղթող ճանաչված դպրոցականները և նրանց դասավանդող ուսուցիչները համապատասխանաբար կպարգևատրվեն նախարարության դիպլոմներով, գովասանագրերով, պատվոգրերով և դրամական պարգևներով.

ե) օլիմպիադայի 3-րդ փուլի հաղթողները կմասնակցեն ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

5. Կրթության բաժինների վարիչներին՝

սահմանված ժամկետներում կազմակերպել ու անցկացնել օլիմպիադայի դպրոցական և շրջանային (քաղաքային) փուլերը և մինչև 2015թ. փետրվարի 20-ը նախարարության ԿԳ վարչություն ներկայացնել շրջանային (քաղաքային) փուլում հաղթող ճանաչված ու հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած դպրոցականների ցուցակներն ըստ առարկաների, ինչպես նաև մանրամասն հաշվետվություն ըստ պահանջվող ձևի՝ հավելված 3 (կցվում է):

6. Նախարարության ֆինանսատնտեսական բաժնի վարիչին՝

ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի կազմակերպման, ինչպես նաև օլիմպիական թիմերի ՀՀ տարբեր քաղաքներում կայանալիք ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաներին մասնակցությունն ապահովելու համար պահանջվող ժամկետներում կազմել ծախսերի նախահաշիվներն ու ներկայացնել հաստատման:

7. Ընդհանուր բաժնին՝

սույն հրամանի բովանդակությունը տեղեկացնել նախարարության պատասխանատու աշխատողներին և կրթության բաժինների վարիչներին:

8. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել նախարարության ԿԳ վարչության պետ Ռ. Մուսայելյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ս.ԱՍՐՅԱՆ

ԿԱՐԳ

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ր Ա Մ Ա Ն

« 20 » դեկտեմբերի 2014 թ. N 277 /Մ

ք. Ստեփանակերտ

«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՆՕՐԵՆ» ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2014 թվականի դեկտեմբերի 1-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 278 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 817 որոշումը՝ **«Տարվա լավագույն տնօրեն»** մրցույթն անցկացնելու նպատակով

հրամայում եմ.

1. Հաստատել «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի կարգը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

2. ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կրթության և գիտության վարչությանը՝ սույն հրամանով հաստատված «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի կարգը հրապարակել «Լուսարար» պաշտոնաթերթում:

3. ԼՂՀ շրջվարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի)կրթության բաժինների վարիչներին՝ ծանոթանալ սույն կարգին և այն ներկայացնել հանրակրթական դպրոցների տնօրեններին ու վերահսկել մրցույթի անցկացման ընթացքը:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել նախարարության կրթության և գիտության վարչության պետ Ռ. Մուսայելյանին:

Ս.ԱՍՐՅԱՆ

Հավելված 1
ԼՂՀ ԿԳ նախարարության
«20 » դեկտեմբերի 2014 թ.
N 277/Մ հրամանի

Կ Ա Ր Գ
«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՆՕՐԵՆ» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Մրցույթի նպատակն է բացահայտել ստեղծագործական աշխատանք կատարող, կառավարման ժամանակակից միջոցներին տիրապետող տնօրեններին, տարածել նրանց մանկավարժական և ղեկավարման առաջավոր փորձը, նպաստել հասարակության մեջ մանկավարժ-ղեկավարի հեղինակության բարձրացմանը:

3. Մրցույթին կարող են մասնակցել հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցների տնօրենները, չեն կարող մասնակցել՝ նախորդ 5 տարիների ընթացքում հաղթող ճանաչված դպրոցների տնօրենները:

4. Մրցույթը կազմակերպում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ նախարարություն):

5. «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթն անց է կացվում երկու փուլով՝ շրջանային (քաղաքային) եւ հանրապետական:

6. Մրցույթի յուրաքանչյուր փուլը նախապատրաստելու եւ անցկացնելու համար ստեղծվում են շրջանային (քաղաքային) եւ հանրապետական գնահատող հանձնաժողովներ:

7. Մրցույթի 1-ին փուլը սկսվում է նոյեմբերի 15-ին, արդյունքներն ամփոփվում են մինչև մարտի 1-ը:

8. Մրցույթի 1-ին փուլի գնահատող հանձնաժողովի կազմը (առնվազն՝ 5 անդամ) հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը: Շրջանային (քաղաքային) գնահատող հանձնաժողովների կազմում ընդգրկվում են շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) կրթության բաժինների վարիչներ, կրթական հաստատությունների աշխատակիցներ, ճանաչված ուսուցիչներ, տնօրեններ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, նաև՝ նախարարության ներկայացուցիչ:

Մրցույթի 1-ին փուլի գնահատող հանձնաժողովի կազմը հաստատելու համար լիազոր մարմինը դիմում է նախարարություն՝ առաջադրելու թեկնածու:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի շրջանային (քաղաքային) գնահատող հանձնաժողովները, ըստ «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի անցկացման գնահատման չափորոշիչների (տես հավելված 2-1), անց են կացնում մրցույթի 1-ին փուլը՝ վեր հանելով շրջանի (քաղաքի) տարվա լավագույն տնօրենին:

10. Լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանումը մրցույթի 1-ին փուլի գնահատող հանձնաժողովին է ներկայացնում 1-ին փուլի մասնակիցների երաշխավորագիր-բնութագրերը, որտեղ նշվում են տվյալներ թեկնածու տնօրենի կրթության, մասնագիտական և կազմակերպչական կարողությունների, մանկավարժական աշխատանքի ստաժի, տարբեր կրթական ծրագրերին ուսումնական հաստատության մասնակցության, արտաքին գնահատման արդյունքների, դպրոցի սովորողների՝ առարկայական օլիմպիադաների հանրապետական և եզրափակիչ փուլերին մասնակցության (առկայության դեպքում) վերաբերյալ, ինչպես նաև դպրոցի կառավարմանը, կրթության ոլորտի բարեփոխումներին վերաբերող տվյալ թեկնածուի նկատառումները (2 համակարգչային էջի սահմաններում):

11. Մրցույթի 1-ին փուլի արդյունքում հաղթողն ընտրվում է այդ նպատակով հանձնաժողովի հրավիրած նիստում, փակ քվեարկությամբ՝ գնահատող հանձնաժողովի ձայների մեծամասնությամբ:

12. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի որոշումը, լիազոր մարմինը մրցույթի 1-ին փուլի հաղթողի տվյալները՝ ըստ հավելված 2-2-ի, մինչև տվյալ տարվա մարտի 15-ը ներկայացնում է նախարարություն՝ հանրապետական փուլին մասնակցելու համար: Շրջանային (քաղաքային) փուլում հաղթող ճանաչված (յուրաքանչյուր շրջանից, Ստեփանակերտ քաղաքից) մեկական տնօրեններ մասնակցում են մրցույթի հանրապետական փուլին:

13. Մրցույթի 2-րդ փուլի գնահատող հանձնաժողովի կազմն առաջադրում է նախարարության կրթության և գիտության վարչությունը, հաստատում է նախարարը: Գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարը, փոխնախարարները, վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, ինչպես նաեւ ճանաչված ուսուցիչներ, կրթության անվանի գործիչներ ու զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, նախորդ 3 տարիներին «Տարվա լավագույն տնօրեն» ճանաչվածները:

Մրցույթի հանրապետական փուլն ընդգրկում է.

- հանրապետական հանձնաժողովի անդամների կողմից ստուգայցեր համապատասխան դպրոցներ՝ տնօրենների մոտ դասալսումներ կատարելու և նրանց գործունեությունը տեղերում ուսումնասիրելու համար.

- 1-ին փուլի արդյունքներով հանրապետական փուլին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրում:

14. «Տարվա լավագույն տնօրենն» ընտրվում է այդ նպատակով հրավիրված նիստում, փակ քվեարկությամբ՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Հանրապետական փուլի մասնակից մյուս տնօրեններից ընտրվում են հաղթողներ նաև հետևյալ անվանակարգերում.

-ուսումնադաստիարակչական աշխատանքները լավագույնս կազմակերպելու համար,

-ուսումնական գործընթացի բարձր որակ ապահովելու համար,

-ուսուցման կաբինետային համակարգի անցումն ապահովելու համար,

-ռազմահայրենասիրական և աշխատանքային դաստիարակության լավագույն փորձի համար,

- գեղագիտական դաստիարակության լավագույն փորձի համար:

15. Մրցույթի հանրապետական փուլի արդյունքներն ամփոփվում են մինչև հունիսի 30-ը:

16. Մրցույթի հանրապետական փուլի մասնակից բոլոր տնօրենները պարգեւատրվում են նախարարության պատվոգրերով, իսկ հաղթող տնօրենը, ինչպես նաև ըստ անվանակարգի պարգևատրվողներն արժանանում են ԼՂՀ կառավարության սահմանած մրցանակի (դրամական պարգև):

17. Մրցույթի արդյունքների ամփոփումը և պարգևատրումը կատարվում է հանդիսավոր արարողությամբ, Ուսուցչի օրը՝ հոկտեմբերի 5-ին:

18. «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի արդյունքները լուսաբանվում են «Լուսարար» պաշտոնաթերթում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1-1

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
«Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի անցկացման ու գնահատման

Տարվա լավագույն տնօրենը գնահատվում է հետեւյալ չափորոշիչներով.

1. ուսումնական գործընթացի դրվածքը եւ արդյունքները,

2.«Կրթության պետական չափորոշիչ» փաստաթղթի պահանջների կատարումը,

3. դպրոցի հաջողությունները առարկայական օլիմպիադաներում եւ այլ մրցույթներում, ինչպես նաև մասնակցությունը հանրապետության մշակութային եւ մարզական կյանքին,

4. ներդպրոցական վերահսկողության վիճակը,

5. մեթոդական աշխատանքների եւ լավագույն մանկավարժական փորձի ուսումնասիրման ու տարածման դրվածքը,

6. դաստիարակչական աշխատանքների դրվածքը, սովորողների դաստիարակության համակարգի առկայությունը,

7. արտադասարանական եւ արտադպրոցական աշխատանքների դրվածքը,

8. ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքը,

9. երեխաների կյանքի եւ առողջության պահպանման, նրանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունքները,

10. անվտանգության տեխնիկայի, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային պաշտպանության կանոնների պահպանումը դպրոցում,

11. բարոյահոգեբանական մթնոլորտի ընդհանուր վիճակը մանկավարժական կոլեկտիվում,

12. նախորդ և ընթացիկ ուսումնական տարվա արդյունքները,

13. նախորդ ուսումնական տարվա շրջանավարտների միասնական և ավարտական քննությունների արդյունքների ու տարեկան գնահատականների համապատասխանությունը,

14. տեղեկություններ նախորդ ուսումնական տարում 9-րդ և 12-րդ դասարանն ավարտած շրջանավարտների զբաղվածության մասին,

15. դպրոցի ուսումնանյութական բազայի վիճակը, պահպանումը եւ օգտագործումը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1-2

Ց Ա Ն Կ
«Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի անցկացման հանրապետական հանձնաժողովին ներկայացվող փաստաթղթերի

1. «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի անցկացման շրջանային (քաղաքային) փուլի արձանագրության քաղվածքը.

2. Շրջանային (քաղաքային) փուլում հաղթող ճանաչված տնօրենի երաշխավորագիր-բնութագիրը գործունեության մասին մանրամասն հաշվետվություն:

3. Համադպրոցական աշխատանքային պլանի պատճենը:

4. Նախորդ և ընթացիկ ուսումնական տարիներին դպրոցում անցկացված միջոցառումների ցանկը (բովանդակությունն ու ուղղվածությունը):

5. Դպրոցական կյանքը լուսաբանող նյութեր (ֆոտոալբոմներ, տեսաերիզներ, տեսասկավառակներ, ԶԼՄ-ներում հրապարակված նյութեր եւ այլն):

6. Դպրոցի ստուգման մասին տեսչական ակտեր ու տեղեկանքներ:

7. Տնօրենի եւ փոխտնօրենների դասալսումների գրառումները:

8. Տարբեր մրցանակներ, պատվոգրեր, որոնց արժանացել է տնօրենը:

9. Նախորդ և ընթացիկ ուսումնական տարիներին դպրոցի տարբեր մրցույթներում (մշակութային, սպորտային, ստեղծագործական շարադրությունների), դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական և եզրափակիչ փուլերում հաղթող ճանաչվածների անվանացուցակը:

10. Նախորդ և ընթացիկ ուսումնական տարիներին նախարարության և կառավարության կողմից դպրոցի պարգևատրված ուսուցիչների անվանացուցակը:

11. Նախորդ և ընթացիկ ուսումնական տարիներին «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն զինղեկ», «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթներում հաղթող ճանաչվածների անվանացուցակը:

12. Նախորդ և ընթացիկ ուսումնական տարիներին հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգ ստացած մանկավարժների անվանացուցակը:

Կրթության և գիտության վարչություն

Խոսք հիշատակի

ՍՎԵՏԼԱՆԱ ՉԵՅՆԱԼԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Կյանքի 73-րդ տարում իր մահկանացուն կնքեց բազմավաստակ մանկավարժ Սվետլանա Չեյնալի Արզումանյանը:

Ծնվել է 1941թ. սեպտեմբերի 1-ին, Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում: Տեղի յոթնամյա դպրոցի երրորդ դասարանն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Քարին տակի դպրոցում: Շուշվա մանկավարժական ուսումնարանն ավարտելուց հետո, 1959թ. Ս.Արզումանյանն աշխատանքի է անցել Ստեփանակերտի շրջանի Ռև գյուղում՝ որպես դասվար:

1960թ.-ից մինչև 2008թ. աշխատել է հարազատ գյուղի դպրոցում և իրեն անմնացորդ նվիրաբերել մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին:

Ա.Արզումանյանը իր մանկավարժական հարուստ փորձը փոխանցել է երիտասարդներին: Աշխատասիրության, նվիրվածության և պատասխանատվության շնորհիվ նա միշտ արժանացել է իր սաների, ծնողական հասարակության և գործընկերների հարգանքին: Ընտանիքում կազմակերպված ու հոգատար մայր էր:

Ս.Արզումանյանը պարգևատրվել է պատվոգրերով:

Ս.Արզումանյանի հիշատակը դեռ երկար տարիներ կմնա նրա բազմաթիվ սաների ու նրան ճանաչողների սրտերում:

Սղնախի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը խոր վիշտ է ապրում վաստակաշատ մանկավարժ Սվետլանա Արզումանյանի մահվան կապակցությամբ և ցավակցում բոլոր հարազատներին:

Սղնախի միջն. դպրոցի
մանկավարժական կոլեկտիվ

ԼՈՒՍԱՐԱՐ
Ի ՏԵՂ ԽՄԲԱԳՐԻ՝
Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 29.12.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: